

նոսէ՝ ալեօք ծերացեալ...: Վերջ՝ բազում ողբօք եւ պաղատանօք հաղիւ ողջացան...: Չեռագիր. Պարիս, Bibl. National, cod arm. 115, 131բ (ԺԳ.):

բ. Վկայութիւն մեծի մարտիրոսին սրբայն Արամիի: — Յետ համբարձման Տեառն մերոյ եւ փրկչին յերկինս, նորին աշակերտացն իսկ եւ առաքելոցն ընդ տիեզերս ամենայն զաւետարանն արկանելով...: Վերջ. եւ այսպէս մնաց միջեւ ցարդ ի տաճար Մկրտչին քահանայական նշխարքն որպէս գանձարան անծախելի զոյգ պահելով ի փառս...:

Պարիս, Bibl. nationale cod. arm. 118, 78ա—87բ (1307):

Յոյն բնագիրն՝ MG 115, 1160—1212 (B. H. G. 172):

5. Ճառ յԱյլակերպութիւնն Քրիստոսի: Հ. Բ. Սարգիսեան³⁰ ջանաց ապացուցանել, թէ Մ. Խորենացւոյ ընծայուած Վարդապետի ճառին հեղինակը աչքի առաջ ունեցած է Յովհ. Դամասկացւոյ Այլակերպութեան ճառը: Նման գրութիւն մը հայերէն թարգմանութեամբ չէ հասած մեղի, պէտք է ենթադրել, թէ հայը ծանօթ եղած է յոյն բնագիրին:

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՎԱՍԿԱՆՆԵՐԸ - ՎԱՆԻ ՎԱՆՔԵՐՈՒ ՄԱՍԻՆ ԸՆԳՆԱԿՆԵՐԸ ԶԱՆԵՆԵՐԸ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շարունակութիւն):

22. ԳԻՏՈՒԹԵԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Վանքերը այն վայրերն էին, որոնց մէջ վանականները կամ նիւթականի աւելի ապահովութիւն ունենալով եւ կամ սակաւով գոհանալու վարժուած, դարձեալ աւելի նպաստաւոր պարագաներու մէջ գտնուելով եւ ազատ ժամանակի վրայ տրամադրելու հնարաւորութիւն ունենալով՝ կրնային անխռով ու ոգելին ուսումի, գիտութեան, մատենագրութեան եւ գրչագրութեան նուիրուիլ: Յայտնի իրողութիւն է որ՝ հայ մատենագիրներու մեծագոյն մասը եկեղեցական նուիրապետութեան անդամներէն է եւ ասոնց առաւելագոյն տոկոսն ալ վանական հաստա-

³⁰ Մովսէս Խորենացւոյ կարծեցեալ Վարդապետի ճառն եւ Մ. Յովհաննէս Դամասկացի. Բազմաձեռն 1889, էջ 305—313, 353—361:

տութիւններու անդամներէն⁵⁶: Թէպէտ ստիպուած ենք ըսել թէ՛ վանքերու սենեակներու մէջ խաւարային մտքեր, ուսումնասեաց անձեր եւ պղերգ արեղաներ սակաւութիւ չեն եղած — մանաւանդ վերջին դարերու ընթացքին:

Վասպուրական մին է մեր աշխարհի այն նահանգներէն, որ բաւական թուով գրողներ ընծայած է հայ ազգին: Համառօտիւ յիշենք անոր վանքերու մէջ ապրած ու գրելով կամ ուսուցանելով զբաղած վանականներու անունները, անոնց կեանքն ու գրական արտադրութիւնները:

ա. Աղքամարի մէջ կը ծաղկին՝

1. Թումա Վ. Միմասեմց՝ որդի Սիմէոնի եւ Արղունի, աշակերտ Թումայ միայնակեացի, Հայրապետի ու Մկրտիչ կրօնաւորի, կը թողու ժամանակագրութիւն կամ Տարեգիրք, գանձեր ու տաղեր: Կը մեռնի 1471ին (Աղանեանց, Դիւան, Ժ., էջ Իէ, 1—14. Ալիշան, Հայագատում, Ա., էջ 320):

2. Գրիգորիս Աղքամարցի՝ անդրանիկ որդի Իսկէնդէրի եւ Շահումի, որ գիտութեան մէջ կը հմտանայ Գրիգոր եւ Յովսէփ վարդապետներու հոգածութեամբ: Մանկաստակ՝ կաթողիկոսական դահ կը բարձրանայ (Աղթամարի մէջ) եւ բաւական խուփայոյց ժամանակի մէջ կը պաշտօնավարէ: Հ. Ակինեանի համաձայն անոր կեանքը երկարած կ'ըլլայ մինչեւ 1580—1587 (Հանդ. Ամս., 1915, էջ 34), որ սակայն հաւանական չերեւար (Արարատ, 1919, էջ 5—6): Գրիգորիս քնարերգական բանաստեղծութիւնը կը մշակէ եւ հայ տաղասացներու շարքին մէջ լաւագոյն դէմքերէն է: Ունի բաւական շատ տաղեր: Նաեւ թարգմանաբար յօրինած է Պղնձէ քաղաքի պատմութիւնը (Անոր մասին ընդարձակօրէն հմտ. Հանդ. Ամս., 1915, էջ 18—64 եւ Արարատ, 1919, էջ 3—40):

3. Յովսէփ Աղքամարցի, որ թէեւ իրրեւ գիտուն վարդապետ իր ժամանակին անուն կը հանէ, սակայն միայն քանի մը փոքրիկ գրութիւններ ունի (հմտ. Կոստանեանցի Կ., Նոր ժողովածու, Դ., էջ 42. Ակինեան, Չաքարիա եպ. Գնունեաց, Վիեննա 1915, էջ 23):

⁵⁶ «Հայկական վանքերը գիտութեան, տաղասացութեան, մանրանկարչութեան եւ գրչագրութեան մէջ նշանաւոր եղան եւ այսօր մեր ձեռքը հասած հին ձեռագիրները վանականներու կը պարտինք» (Inglistian P. V. ի Morgenländisches Christentum, հրատ. Krüger-Ticiak, Paderborn, 1940, էջ 262):

բ. Արգելանի վանքէն են՝ Եղիա եւ Անդրէաս տաղասացները, որոնց տաղերէն մի քանի հատը միայն ծանօթ են (ՎՎՎ., Ա., էջ 375—376):

գ. Ս. Թադէոսի առաջնորդ եւ Արտաղի Հայրապետ է՝ Գրիգոր Գ. Չալարէկեանց Մակունցի, որ Կիրակոս Վիրապեցիէն էլմիածնի կաթողիկոսական դահը կը գրուէ († 1466): Ունի կոնդակ եւ թուղթ (Շահ-խաթունեան, Ստորագրութիւն, Ա., էջ 53, Բ., էջ 289, ՎՎՎ., Բ., էջ 584—589, ուր էջ 488 «Գրիգորսի» սրբագրել՝ «Գրիգորիսի»):

դ. Լիմի անդամներէն գրական երկեր ունին՝

1. Չախարիա եպ. Գնունեաց, որ Պոռչեան տոհմէն է եւ ծնած Խժիժ գիւղի մէջ, հաւանականաբար ԺԶ. դարու սկիզբը, աշակերտ՝ Գրիգոր, Յովսէփ եւ Եսայի վարդապետներու: Կ'ապրի Աղթամարի, Վարազի, բայց մանաւանդ Լիմի մէջ եւ կը յորհրջուի Լիմեցի: Ճամբորդած է մինչեւ Հոռոմ ու Պոլիս: Եղած է Գնունեաց եպիսկոպոս: Հ. Պոտուրեան կը գրէ՝ «Ապահովապէս մինչեւ 1550 կրնայ ապրած ըլլալ» (Բազմ., 1910, էջ 154): Գրչագիր է, նկարող է եւ տաղասաց: Ունի տաղեր՝ «Պարզ ու կոկիկ» (Անահիտ, 1910, էջ 238): «Քնարերգու է նա, վարդի եւ բլրուլի պատկերներու առջեւ խորհրդական հայեցումներով» (Ակինեան Հ. Ն., Չաքարիա եպ. Գնունեաց եւ իւր տաղերը, Վիեննա 1910, էջ 18):

2. Ներսէս Վ. Մովսէսի, կոչուած՝ նմանապէս Բեղլու («ղի մեծ էր բեղն» Առ. Դաւրիժ., էջ 391) ծնած է Ասկնջաւ (ի Մոկս) գիւղի մէջ: Ուսման ընթացքը կը կատարէ Վարազի վանքի մէջ Բարսեղ Վ. Գաւառացիին մօտ եւ «յոլով աշխատեցաւ եւ առաւելացոյց քան զԲարսեղ վարդապետն եւ քան զընկերս իւր» (Առ. Դաւրիժ., էջ 391): Մեծ Անապատի կամ Հարանց Անապատի մէջ տիրող ոգեւորութեան եւ բարեկարգութեան ձայնը Ներսէս կը գիւթէ եւ անյապաղ կը փութայ հոն ու դասեր կ'աւանդէ: Սակայն չորս տարի յետոյ Վասպուրական կը վերադառնայ եւ Լիմի անապատը կը վերաշինէ՝ կը բարեկարգէ: Մինչեւ մահը (1628) Լիմ կը մնայ եւ աշակերտութիւն հասցնելով կը գրադի: Անոր գրչէն կը ծորին՝ «Ներբողեան զովեստի չորեցունց արանցն, որք եղեն սկիզբն աշապատի կարգել», «Ողբ ի վերայ

առման Երուսաղէմի ի Սալահատինայ», «Տաղ ի փոխունն Աստուածածնի», «Ներսէս վարդապետի ասացեալ զողբս վան անձին եւ յորոց վերայ յարմարի» (Մանուկ մտաւարժէի եւ ոգւոյ բարոյ գեղեցայ), «Տաղ վարդապետին ի Մովսէսի Ներսէսէ» (Այսօր ցընծայ լեռն թափօր եւ զուարճանայ մեծն Ահեմոն), «Վիճարանութիւն երկնի եւ երկրի» (Երկինքն ու գետինքն եղբարք, աճապորն քան զօրն աւելի) եւն, մեծ մատով ընտիր եւ գովելի (Առ. Դաւրիժ., էջ 391, 394, Չամչեան, Պատմ. Հայոց, Գ. էջ 565, Ալիշան, Հայագատում, Դ., էջ 341. նոյն՝ Սիսական, էջ 248, նոյն՝ Յուշիկը Հայրենեաց, Ա., էջ 308, Բազմաձեռն. 1897. էջ 424, Արարատ, 1898, էջ 548, Փափագեան, Պատմ. Հայոց գրականութեան, Թիֆլիս 1910, էջ 140, ՎՎՎ., Ա., էջ 18—21, եւն եւն):

3. Ստեփանոս Շառախեցի, որ Ներսէս Մովսէսի աշակերտն է եւ Լիմի առաջնորդութեան յաջորդը՝ եւ «ի ննջումն Աստուածածնի» տաղին վրայ 300 տուն յաւելում կ'ընէ (Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., էջ 565) — ՎՎՎ., Ա., էջ 21—27, կարելոր էջ 21, ծն. 13):

4. Մելիքսեփ Վժանցի եւ Ներսէսի աշակերտ է եւ հմուտ ու ուսուցիչ «արտաքին գրոց», սակայն անոր գրչէն արտադրութիւն դեռ երեւան չէ եկած: Նա իր մահաօրիժ հիւանդութիւնը Լիմ անապատէն կը ժառանգէ եւ Երեւանի մէջ կը մեռնի (Առ. Դաւրիժ., էջ 399—401, ՎՎՎ., Ա., էջ 27—29):

5. Վարդան Լիմեցի ունի հանելուկներ (Տաշեան, Մայր ցուց., էջ 480):

6. Յարութիւն Եպիսկոպոս Լիմի, որուն յորհորումովը Եւաղրի Յաղագս Ը խորհրդոց գրութիւնը կը հրատարակուի (Չարհանէլեան, Հայկ. Մատենագիտութիւն, էջ 182, Աղանունի Հայ Երուսաղէմ, էջ 343):

7. Յակոբ եպ. Թօփուզեանց, միաբան եւ վանահայր Լիմի, որ վանական գործերու համար Հալէպ ու Թիֆլիս (մհտ. փրատարի կտակին պատճառով) կը ճամբորդէ եւ 1879ին կը մեռնի: Հոռոմի համբաւ կը շահի: Կը գրէ Լիմ անապատի պատմութիւնը, Զբօսարան եւ տաղեր (հմտ. Աղանունի, Հայ Երուսաղէմ, էջ 317):

Ե. Հոգեաց վանքի մէջ եւ այլուր կ'ուսուցանէ վարդան վարդապետը (Հմմտ. Հանդ. Ամս. 1942, էջ 175—176):

Գ. Մեծփի վանքը բաւական շատ մատենագիրներ հասցուցած է՝

1. Մխիթար Սասնեցի, ծնած Սասունի մէջ, հաւանականաբար 1260ին, կ'ուսանի առ ոտս Ներսէս Մշեցի եւ Եսայի Նչեցի վարդապետներու եւ երկարատեւ կը պաշտօնավարէ Մեծփայ վանքի մէջ, ուր եւ 1337ին կը մեռնի: Կը թողու ձառերու ժողովածու, Յովհաննու երեք կաթողիկեայ թղթերու մեկնութիւնը, սոյն առաքելին «Հանգիստ»ի մեկնութիւնը եւ գրութիւն մը Լեւոնի Տօմարին դէմ (Հմմտ. ՎՎՎ., Բ., էջ 425 եւ Գարեգին Յովսէփեան, Մխիթար Սասնեցի, Վաղարշապատ, 1899): Սարգիս առաջնորդի օրով Եւազբի արտագրութիւնը կ'ընէ (Ջարբհանէրան, Հայկական թարգմանութիւնը նախնաց, էջ 427):

2. Յովհաննէս Արեւիկեցի Ոսպնակեր վարդապետը Մխիթարի ընկերակիցն է եւ անոր հետ ուսում կ'առնու: Երկարատեւ Մեծփի մէջ կը հաստատուի: Կը մեռնի միեւնոյն թուականին (1337), բայց այլուր՝ Յարութիւն գիւղը: Ունի մեկնութիւն Պատարազի, եւ գուցէ ուրիշ քանի մը մանր մեկնութիւններ (Հմմտ. Գաթրճեան-Տաշեան, Սրբազան Պատարազամտոյցը Հայոց, Վիեննա 1897, էջ 511, Ալիշան, Հայապատում, Ա., էջ 298):

3. Յովհաննէս Մեծփեցի ծնած է Ջարիշատ գիւղաքաղաքը եւ է որդի Ներսէս քահանայի, որ զինքը կու տայ «յուսուսն աստուածաշունչ գրոց յաստուածարնակ սուրբ ուխտն գեղեցկազարդ անապատն սուրբ Աստուածածնի Մեծորայ վանք վերածայնեալ»: Նահապետ կրօնաւորը կ'ըլլայ անոր ուսուցիչը եւ Ներսէս արքեպիսկոպոսը զինքը քահանայ կը ձեռնադրէ: Ապա գիտութեան մէջ կը զարգանայ Սիւնիքի մէջ Յովհաննէս Կախիկի մօտ եւ Գրիգոր Տաթեւացիէն վարդապետական աստիճան կը ստանայ: Վերադառնալով Մեծփայ վանքը՝ զայն գեղեցիկ տաճարով կ'օժտէ (1402—1409) եւ կը ծաղկեցնէ: Յետոյ նորէն Սիւնիք կ'անցնի եւ անկէ Աբարատեան նահանգը, ուր Այբի վանքի մէջ կը մեռնի եւ Հայոց թառի մէջ կը թաղուի (Մեծփ., էջ 53—61): Անոր գրչէն կը թուին ըլլալ

«Հարցմունք բաղմադիմի աղանդից». «Պատասխանիք ընդդէմ աղանդոց» եւ «Տարայոց հերձուածողաց եւ աղանդից» (Հմմտ. Baronian-Conybeare, Catalogue of the Armenian manuscripts in the Bodleian library, Oxford, 1918, էջ 159, Հմմտ. Karamianz Verzeichnis der arm. Handschriften in Berlin, Berlin, 1888, էջ 23):

4. Թովմաս Մեծփեցի, որ ծնած է հաւանորէն 1376—1379ին Աղի գիւղի մէջ եւ որդին է Ստեփանոսի ու Շամշայի: Ուսում առնելու համար կ'այցելէ Մեծփի, Սուխարայի, Սալնապատի եւ Տաթեւի վանքերը՝ ժամանակակից անուանի վարդապետներու մօտ (Յովհաննէս, Սարգիս, Վարդան ու Գրիգոր Տաթեւացի, որմէ եւ վարդապետական դաւադան կ'ընդունի): Ապա տարիներով Մեծփի վանքի մէջ ուսուցանելով եւ վարդապետելով կը զբաղի: Կ'ունենայ աշակերտներու հոյլ: Քաղաքական աննպաստ պարագաներու հետեւանքով երբեմն իր սիրած վանքը լքելու կը ստիպուի, սակայն հազիւ փոթորիկը փարատած՝ նորէն անոր յարկին տակ ամփոփուելի կը փութայ: Յայտնի է թէ էջմիածնի կաթողիկոսութեան հաստատութեան մէջ անոր գործունէութիւնը խանդոտ էր եւ նշանակալից: Ակոսի գիւղին մէջ 1446 եւն կը մեռնի (Հմմտ. Յովսէփեան Գ. Վ. Նոր Նիւթեր Թովմայ Մեծփեցու կենսագրութեան, էջմիածին 1914, Ալիշան Հ. Ղ. Հայապատում Ա. էջ 315, ՎՎՎ., էջ 427 եւն): Թովմասի գրչէն են՝ «Պատմութիւն համառօտ անօրէն թամուրին». որուն ոմանք կը կցեն եւ որմէ ոմանք կը բաժնեն անոր «Յիշատակարանը», Գրիգոր Խլաթեցիի վկայարանութիւնը եւն եւն: Անուանի էր իբրեւ զըջազիր եւ շատ մը արտագրութիւններ կտակած է:

5. Դանիէլ Մեծփեցի, որ կը ծաղկի Ժ. Գ. դարուն Մեծփի մէջ, կը թողու ներքող մը «ի Մխիթար Սասնեցի» որ հրատարակուած է Յայտմաւորքի մէջ (տպ. Կ. Պոլիս, 1834, էջ 148):

6. Մկրտիչ Մեծփեցի, վերոյիշեալին հետ Մխիթար Սասնեցիի կ'աշակերտի եւ Մեծփի կ'անդամակցի: Կը գրէ «Պատմութիւն հաւաստի եւ համառօտ Մխիթար վարդապետի» (Աբարատ 1899, էջ 165): Գրութեան վերջաւորութիւնը կը մաղթէ՝ «ՉՍտեփաննոս վարդապետ գհոգեւոր հարգատ նորին եւ զանարժան Մկրտիչ, որ

չարագրեցի զսակաւ պատմութիւնն, պաղատանս վերընծայեմ յիշել զմեզ առ Տէր Յիսուս Քրիստոս...»:

7. Սիմէոն Վ. Ապարանցի, հաւանականաբար ծնած է 1540—1550 Աղձնեաց Ապարանք գիւղը, որմէ եւ Ապարանցի յորջորջումը: Ծնողներն էին Պաշատուր եւ Նարինջ: Յովհաննէս Բրգութեցի կ'աշակերտի եւ ապա Մեծփայ վանքի մէջ կը հաստատուի, բայց երբեմն առթական ճամբորդութիւններ կ'ընէ: Կ'ունենայ աշակերտներու բաղմութիւն: Հաւանականաբար ժէ. դարու սկիզբը կը մեռնի: Անոր գրչէն են՝ «Վիպասանութիւն», որ խորագրուած է՝ «Շարագրութիւն հոմերական վիպասանութեամբ սակս Պահլաւունեանցն զարմի եւ Մամիկոնեանցն սեռի ի սկզբանէ մինչեւ ցվախճան որդի զհարսն փոխանակելով...» որմէ կարելի է անջատել «Յիշատակարան շարագրութեանս եւ պատմութեան Ապարանից Ս. Նշանին եւ ընդ սոսին ողբ ցաւազին հեծեծանաց ի վերայ Մեծփայ սուրբ ուխտին...», «Ողբ ի վերայ առմանն Թաւրիզու», «Ողբանք ի վերայ թախտին Տրդատայ թագաւորին» (Հանդէս Ամսօրեայ, 1919, էջ 79—96 — Ալիշան, Հայապատում, Ա., էջ 320—325):

Է. Ս. Յակոբայ (Կապուտկոզի) վանքի մէջ՝

Սիմէոն Վ. Ռշտունի Բախումացի կը յաջորդէ Ստեփանոս փր վարդապետի եւ վանքը շատ կը զարգացնէ: Թէեւ կ'աւանդուի թէ՛ «եղեւ աշակերտ զրոց եւ սպասուոր բանի», սակայն իրմէ միայն քանի մը տաղեր եւ Յիշատակագրութիւն մը հասած է (Աղանեանց, Դիւան, Ժ., էջ Իէ):

ը. Նարեկի վանքի պարծանք են՝ Անանիա եւ Գրիգորի Նարեկացիները, հանրածանօթ:

բ. Չաղար Ս. Նշանի մօտերը իր կեանքի վերջին օրերը կ'աւանդուի թէ՛ Եղիշ Պատմագիրն անցուցած ըլլայ: Ժ. Պատրկայ վանքի կ'անդամակցի՝

Յովհաննէս վրդ. Բրգութեց, որդի Դուլիջանի եւ Նուպարի, ծնած է Վառիշատ գիւղի մէջ: Բաղէշի մէջ Ներսէս Ամկեցիին կ'աշակերտի եւ հաւանականաբար 1570ին վարդապետական դաւադան կ'ընդունի: Կը զբաղի աշակերտներու ծառայի մտքերը յագեցնելու եւ զըջազրութեամբ: Եւ այնպէս կը թուի թէ առաջին մարդին մէջ շատ յա-

ջողակ եւ արդիւնալից կը հանդիսանայ, որ Սիմէոն Ապարանցին կը գրէ՝ «Սուրբ վարդապետս աստուածարան, Լուսաւորիչ թորգոմածնաց»: Կը վախճանի 1589 տարւոյն: Ունի քանի մը գանձ (Հմմտ. Հանդէս Ամսօրեայ, 1937, էջ 210—215):

ժա. Պաւլիկ վանքէն՝ Յովհաննէս Պաւլիկեցի վարդապետը կ'ապրի ԺԵ. դարուն: «Մի քանի լաւ դանձունի ասացեալ» (Նօտարք, էջ 46):

ժբ. Սուխարայ վանքի միաբան՝ Կիրակոս Վիրապեցի, որ էջմիածնի առաջին կաթողիկոսը կ'ըլլայ կը գրէ՝ «Թուղթ արձակման կապանաց Աղթամարայ» (Թ. Մեծփեցի, Յիշատարական, էջ 54):

ժգ. Վարագ՝ 1. Գրիգոր Վարագեցի կ'ապրի ԺԵ. դարու մէջ: «Նրա անունով մեզ հասել է մի ժամանակագրութիւն, որ դտնուում է Վանի սուրբ Վարդան եկեղեցում պահուած ինքնագիր Յայտմաւորքի վերջը» (Աղանեանց, Դիւան, Գ., էջ 19—1Է եւ էջ 61—66, ու ՎՎՎ., Ա., էջ 325):

2. Պօղոս Մոկացի, Բար գիւղէն, կը յարի Կարապետ Չաղ վարդապետին Վարագի մէջ եւ հակառակ ընդիմադիրներու՝ ընտիր գործունէութիւն կ'ունենայ: Անուանի իբրեւ քարոզիչ: Կը մեռնի Ռիթ ամին (Առ. Դաւրիթ., էջ 266—283. ՎՎՎ., Ա., էջ 311): Թէեւ Առաքել կը հաւաստէ թէ՛ «Ուսու դամենայն գիրս հին եւ նոր կտակարանաց եւ իբրեւ կատարեալ եղեւ գիտութեամբ» (Առ. Դաւրիթ., էջ 266), սակայն գրական որ եւ է արտագրութիւն մը գոնէ ինծի անձանօթ է:

6. Չափարիս վարագեցի, առաջնորդ վարագի եւ տաղասաց կ'երգէ՝ Չվարագ ասեմ զբողձալին, ըզհրեշտակաց փափաղեղին»: Հ. Ն. Ակինեան կը միտի Չափարիս Լինեցին կամ Գնունեաց կաթողիկոսը սոյն տաղին հեղինակ ընդունելու (Հմմտ. Չափարիս եպ. Գնունեաց, Վիեննա 1910, էջ 47—50 եւ ՎՎՎ., էջ 310):

7. Վարագի նորագոյն նշանաւոր գրողն է Մկրտիչ Կաթ. Երիւնեան Հայրիկը (Հանդէս Ամսօրեայ, 1907, էջ 353 եւն), իսկ գրականութեամբ զբաղողներէն են՝ Արիստակէս Վ. Տէվկանց (Հայերգ), Ղ. Վ. Փիրղամէլեան (Նօտարք եւ Չորս Ընկերք):

3. Ստեփանոս Վարագեցի. տաղասաց, կը գրէ՝ «Ճաղ վասն զարնան» (Աշուն էր եղաւ գարուն, ցամաքեցաւ ձիւնն սարերուն»



և Երզ մը, որուն սկիզբն է՝ «Եղբայրք շատ բարեւ լալով թէ յաշխարհիս ոնց կայք դուք բարով» (Մուսանձտեանց, Մանանայ, էջ 264. Հայերգ, էջ 129, 167. Բանբեր, Ա.—Բ, 1921—1922, էջ 128 և Macler, Notices des man. arm. dans quel. Bibl. de l'Europe centr. էջ 149—164):

4. Ատոմ վարագեցի: տաղասաց, կենսագրական գծեր կը պակսին. ԺԵ. դարուն ապրած: Իր տաղերէն երկուքը հրատարակուած՝ «Արարատ»-ի մէջ 1902, էջ 447—451: Իր «տաղ Յովհաննէս Ոսկերեանի» կը դըտնուի մեր Թ. 577 Ձեռագրին մէջ:

5. Յովհաննէս վարագեցի տաղասաց, որ ունի՝ «Տաղ գեղեցիկ և լա... վասն ծննդեան Գրիտոսի...», «Յայն առաւօտին, ասեղ գիշերին եղնին էր ծնել խայթհոյթ մեր (մ'էր) բերել»⁵⁷ (Karamianz, Verzeichnis der arm. Handschriften zu Berlin, Berlin, 1898, էջ 68): Գուցէ սա է Փիլոզալէմեանի յիշած՝ «Յովհաննէս հանճարեղ և գրագետ վարդապետն» 1597ին կը ծաղկի ի վարագ» (Դիւան, Ժ., էջ 502):

ԺԳ. Տէր Յուսէփ որդւոյ վանքի մէջ կը ծաղկի Ստեփանոս Տէր Յուսէփ որդի, որուն կենսագրութիւնը ընդարձակօրէն տուած ենք (հմմտ. ՎՎՎ., Ա., էջ 359): Ունի՝ «Խրատ հաւատացելոց վասն վերջին դալտեան. ի մէջ գիշերի կացեալ Գարբէլի» (հմմտ. Տէր Մկրտիչեան Գ., Հայկականք Բ., Վաղարշապատ 1899, էջ 81—87):

ԺԵ. Մխանչիագործի վանքէն է՝ Յակոբ Եպ. Նետրաբնց, ծնած Արծկէի մէջ, որդի՝ Ներսէս քահանայի և Խաթուն Մելիքի: Կ'ամուսնանայ Մեհրուբանի հետ, սակայն անոր տարածամ մահէն յետոյ կ'առանձնանայ Ս. Սքանչելագործի վանքը, ուսկէ կը բարձրանայ Բղնունեաց եպիսկոպոսական աթոռը: Կը մեռնի 1501ին: Նկատողութեան արժանի տաղասաց է: Անոր կենսագրութեան ու գրութիւններու մասին հմմտ. Ակինեան Հ. Ն., Մատենագրական հետազոտութիւններ, քննութիւն և բնագիր, հատոր Գ, Վիեննա 1938, էջ 119—138):

ԺԶ. Յիպնայ վանք՝ Գրիգոր՝ Խլաքեցի Ծերեմց, յորջորջուած ծննդավայրի և հօրը անունովը (Խլաթ և Ծեր) Յիպնավանքի մէջ վարդան ճղնաւորի կ'աշակերտի: Ապա իր ուսումը կը կատարելագործէ Յովհաննէս Որոտնեցիի մօտ Ապրակունեաց վանքի մէջ և Սարգիս վարդապետի քով Սուխարայ վանքի յարկի տակ: Վերադառնալով Յիպնավանքը կը «ժողովին առ նա բազումք ի կրօնաւորաց և յուսումնասէր եղբարց»: Նմանապէս ուրիշ վանքերու մէջ ևս աշակերտներու ուսում ջամբելով կը զբաղի: Սակայն ևս այնպէս կը թուի թէ անոր ժամանակին կարեւոր մասը լեցուած է կարդալով, զրքեր արտագրելով՝ զրչագրութեամբ («տիւ և գիշեր գիրս զրէր»), և նմանապէս նկարելով: Իրբեւ 75 ամեայ ծերունի Յիպնայ Ս. Ստեփանոսի վանքի մէջ կը նահատակուի (Թովմ. Մեծօրէցի, էջ 41—43):

Նա կոչուած է «Երկրորդ Վկայասէր», վասն զի Յայսմաւուրքը կ'ընդարձակէ նորանոր յաւելումներով: Դարձեալ՝ կը զրէ Պատմութիւն մը, որ դեռ երեւան չէ ելած, ձառեր՝ քանի մը հատ, «Յիշատակարան աղետից», «վասն Մովսէսի գրոյն», թուղթեր. հանելուկներ, Ողբ ի նահատակութիւն Թէոդորոս կաթողիկոսի: Գրիգոր Խլաթեցիին շատ բան կը պարտի հայ «Գանձարան»ը: Նա է որ հայկական հին գանձերէն շատերը, որոնք զուցէ մոռացութեան պիտի մատնուէին, հատորի մը մէջ կ'ամփոփէ: Ինքն ալ կ'երգէ ու մեղի կը թողու քանի մը գանձերը (Չարբանէլեան, Պատմ. հայկ. հին դպրութեան, Բ., էջ 194. Արիւան, Հայսպատում, Ա., էջ 311. Արարատ, 1897, էջ 412 ևն. Տաշեան, Մայր Յուց., էջ 479. Բանասէր, 1905, էջ 97. Աղբիւր, 1889, էջ 127 ևն ևն):

ԺԷ. Սալնաձորի վանքերու մէջ աւելի իբրև քարոզիչ և ուսուցիչ քան գրող անուն կը հանեն՝ Բարսեղ Աղբակեցի, վարդապետ վարդապետ, Յովհաննէս Կոլոտ, Գրիգոր Շրթացակեր, Ներսէս Ամկեցի ևն: Յաւելումք՝

Շատ բնական է որ վանքերու մէջ տեղի ունեցած լաւ բաները — անբասիր կեանք, բարեկարգութիւն, գիտութեան սէր ու զարգացում, նաև աւանդուած սքանչելիքներ ու հրաշքներ — հայ մատենագիրներու և գրողներու — մանաւանդ բանաստեղծական


⁵⁷ «Գեղունի» մէջ 1905, էջ 6—9, կը հրատարակուի ողբերգութիւն մը «Յովհաննէս վարդապետի վարագացու եղբորայն» որ նորագոյն շրջանի գործ է: Բարսեղ վարդապետն ունի ընդարձակ յիշատակագրութիւններ (հմմտ. Դիւան, Ժ., էջ 38—35 և ՎՎՎ., Ա., էջ 114, 311):

թուիչքով օժտուածներու — և հոնտորներու միտքն ու սիրտը յուզէին՝ դանոնք հրաշակելու, պանծացնելու և յաւերժացնելու: Եւ ասա ունինք՝

ա. (Սարգիս Գլիոցիէն) «Ներբող ի Լմայ անապատն» (ՎՎՎ., Ա., էջ 25):

բ. (Ներսէս Մոկացիէն) «Ներբող յաղազս շինման և հաստատութեան Լմայ ծովապատ անապատին Ս. Գէորգայ...» (ՎՎՎ., Ա., էջ 21, ծն. 13):

գ. «Դրութիւն դրուատման բանից զովականաց առ հրեղինակիր անապատն Կոտուց և առ ի նմա բնակեալ խարաղնազկեցիկ միանձանցն ջոկս աստուածագումար հարց»⁵⁸ (ՎՎՎ., Ա., էջ 58 և 85):



Կարմրաւոր Ս. Աստուածածնի վանքը (ՎՎՎ. Ա. էջ 236)

դ. (Փիլ. Մոկացիէն)՝ «Տաղ Աղթամարայ սուրբ Խաչին» (անդ, էջ 100):

ե. (Յովհ. Գեղեղեանց Պողոսեանցէ)՝ «Ճառ ներբողինի և դրուատ գովեստի սրբոյ և մեծի աթոռոյն վարագայ»⁵⁹ (անդ, էջ 269):

զ. (Յովհ. Բրգութեանցէ)՝ Տաղ մը և գանձ մը՝ «Ի գետարդել Ս. Նշան» (անդ, էջ 269):

է. (Չարբիա վարագացիէ)՝ Տաղ՝ «Չվարագն ասեմ զրաղձալին» (անդ, էջ 268, 310):

ը. (Յովհ. քհ. Վանանդացիէ)՝ «Ճառ ներբողեան ի սուրբ Խաչն Քրիստոսի և պատմագրական աստացութեան ի սուրբ Նշանն վարագայ» (տպ. Մոսկուա 1853):

⁵⁸ Ձեռագրի մը մէջ կայ ոտանաւոր մը՝ «վասն զնալոյն մեր ի Կոտու անապատ(ի)ն, որ ծովը գմեղ արդեկոյր» (Արարատ, 1919, էջ 18):
⁵⁹ Օրինակ մը Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ մէջ (Հայ Խօսնակ, 1925, էջ 196):

բ. «Գանձ վարագայ սուրբ Նշանին. — Գլուխն եկեղեցւոյ, վէմն հաւատոյ...» (Տաղ) Այսօր մեծ զարմանք հրաշից յայտնեալ... փոխէ. Ամփոփեալ գնշան խաչին ի վաստուրական երկրին» (Սիւրմէեան, Յուց. հայ. Ձեռ. Հալէպի, Ա., էջ 149):

ժ. Գանձ Մեծօրի մասին (հմմտ. Աճառեան Հ., Յուց. հայ. Ձեռ. Թարբիղի, էջ 36. ՎՎՎ., Բ., էջ 437. Իսկ Սիմ. Ապարանեցիի գրութիւնը հմմտ. ՎՎՎ., Բ., էջ 437):

ժա. Յակոբ Նետրաբնցէ գանձ մը և երկու տաղ ի Սքանչելագործ Ս. Նշան (հմմտ. ՎՎՎ., Բ., էջ 451):

ժբ. (Սիմէոն Ապարանեցիէն)՝ «Յիշատակարան շարադրութեան և պատմութիւն Ապարանից սուրբ Նշանի» (Հանդ. Ամս., 1943, էջ 72):

ժգ. (Բարթոլոմէոս Վ.է) Տաղ՝ «Ի Կարմրաւոր Ս. Աստուածածին» (ՎՎՎ., Ա., էջ 236):

ժդ. Յակոբ Թօփուզեան կը զրէ Լիմի պատմութիւնը (ՎՎՎ., Ա., էջ 43—44):

(Շարունակելի:) ԳԿՏ. Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒԿԱՆ ՏԱՐԻՆ ԵՕԹՆԵՐՈՐԳ ԳՆՐՈՒ ՍԿԶՐԸ
ՆՊԵՍՍ ՄԸ ՀԱՅՈՑ ՏՕՆԵՑՈՑՅԻ ՈՒՍՈՒՄՆԵՐՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն:)

2. Տօն սուրբ Աստուածածնի:
Յանկս իր երկրորդ Բաժնին մէջ կը նշանակէ. «Բ. Չատկէն ի վեր կիրակէքն ամենայն. Տօն Ս. Աստուածածնին և տօն վարդապետին, բաց ի մատաղենեացն, որ է կատարումն Բառասնորդացն Առաքելական տօնիցն Հաւատացելոց Չատկին» էջ 113—114): Այս «Բ. Չատկին» առանց տարակուսի Պենտակոստէն է, որ նաև «Հաւատացելոց Չատկի» կ'անուանուի. «Բ. Չատկէն ի վեր կիրակէքն» կը սկսին Պենտակոստէնէն ետքը Ա. Կիրակիէն: Այս կիրակիներուն ժողովուրդի նուէրները կը պատկանին ամուսնացեալ քահանաներուն, բացի այն մատաղենիքներէ որոնք կ'ընծայարեւրուին Ս. Աստուածածնի և